ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԾԱՌԱՏՈՒՆԿ ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ՝ ԱՆՄԱՀԱՑԱԾ ԼԵՎՈՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊՈՒՐԱԿՈՒՄ

19.10.2022 20:06

ՀՀ փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի համատեղ նախաձեռնությամբ՝ փաստաբանական համայնքն այսօր ծառատունկ իրականացրեց փաստաբան Կարեն Լևոնյանի որդու՝ Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած Լևոն Լևոնյանի անվան պուրակում:

Հարգանքի տուրք մատուցելով Լևոնի ընտանիքին՝ գործընկերները փաստաբան Կարեն Լևոնյանին հղեցին երախտիքի և մխիթարանքի խոսքեր՝ շեշտելով, որ հերոսների հարազատները մշտապես պետք է արժանանան հարգանքի ու մեծարանքի:

Փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Զոհրաբյանը Լևոն Լևոնյանի՝ հանուն հայրենիքի անձնուրաց հերոսությունը վեհ օրինակ համարեց գալիք սերունդների համար:

«Երբ ցորենի հատիկը ցանում են, թվում է հատիկը մեռնում է հողում, բայց մեկ հատիկը հետո ծիլեր է տալիս ու հասկի վերածվում»,-ասաց Արա Զոհրաբյանը՝ հավելելով, որ Լևոնի հերոսությունն այս գաղափարախոսությունն ունի:

Այնուհետև, փաստաբանական համայնքի ներկայացուցիչներն այցելեցին միջնակարգ դպրոց, եղան Լևոնի անունը կրող դասասենյակում:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ներկաներին տեղեկացրեց, որ միջնակարգ դպրոցի աշակերտների համար կկազմակերպեն դասընթացներ մարդու իրավունքների և փաստաբանական գործունեության թեմաներով:

Փաստաբան Կարեն Լևոնյանը, ՀՀ փաստաբանների պալատին և ՀՀ փաստաբանական դպրոցին հանձնեց շնորհակալագիր՝ իր ընտանիքի կողքին լինելու, աջակցելու և հերոսին պատշաճ հարգանքի տուրք մատուցելու համար:





BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })